



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՊՈՐՏԻ ԵՎ  
ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ  
ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

05 Նոյեմբերի 2018 թ. № 159 - Ա/1

ք. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՊՈՐՏԻ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ  
ՀԱՐՅԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 17-Ի № 133-Ա/1  
ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ  
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 3-րդ կետերի և 34-րդ հոդվածի 1-ինից 3-րդ մասերի՝ հրամայում եմ.

1. Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարի 2018 թվականի հոկտեմբերի 17-ի «Երիտասարդական աշխատողի վերապատրաստում» ծրագիրն ու ծախսերի նախահաշիվը հաստատելու մասին» № 133-Ա/1 հրամանի № 1 հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) 14-րդ կետի «նոյեմբերի 12-14-ը» բառերը փոխարինել «դեկտեմբերի 5-7-ը Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Իջևան քաղաքում» բառերով,

2) 15-րդ կետի «նոյեմբերի 26-28-ը» բառերը փոխարինել «դեկտեմբերի 13-15-ը Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Իջևան քաղաքում» բառերով,

3) 16-րդ կետի «11-12-ը» թվերը փոխարինել «24-25-ը Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Իջևան քաղաքում» բառերով:

4) 17-րդ կետի առաջին նախադասությունը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ՝ «2018 թվականի դեկտեմբերի 24-25-ը Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Իջևան քաղաքում նախատեսվում է իրականացնել նաև «Երիտասարդության հետ աշխատանքի ուղղությամբ մասնագետների պատրաստում, վերապատրաստում և որակավորման բարձրացում» թեմայով կոնֆերանս, որին կիրավիրեն ԱՊՀ անդամ երկրների երկու ներկայացուցիչներ:»:

ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝



Գ. ՂԱԶԱՐՅԱՆ